

նապարհը մինչեւ Տիգրանակերտ (Ամիդ) : Հոս համբաւուած էր նոյն շրջանին Սրապիոն Ուրհայեցւոյ դպրոցը : Գտաւ առ ոտս Սրապիոն վարդապետի Գրիգոր Կեսարացին եւ Յովհաննէս Ուրհայեցին, եւ խառնուեցաւ ինքն ալ անոնց թուին մէջ :

Սրապիոնի երիցադոյն աշակերտներէն էր Գրիգոր. 1595ին կը ստանայ վարդապետական դաւադանն եւ կը հեռանայ Վարդապետէն² : Մովսէս Յովհաննու հետ շարունակեց մնալ ուսուցչին ոտքը մինչեւ 1603, երբ Սրապիոն հրաւիրուեցաւ Էջմիածին բազմելու Կաթողիկոսական դահը : Հաւանօրէն չհետեւեցաւ Մովսէս իւր ուսուցչին քայլերուն³ : 1604 Դեկտեմբերին տեղահանուեցաւ եւ Սպահան տեղափոխուեցաւ Արարատեան դաշտի ժողովուրդը. խաչի ճանապարհ մը ընթացաւ Սրապիոն. եւ 1605ին հրաժարելով աթոռէն վերադարձաւ Ամիդ : Հոս առ ոտս իւր սի-

Մովսէս արեղայ ձեռնադրուելէն ետքը ժամանակ մը անցուցած է Աշտարակ :

² Յակոբ Կեսարացի իւր Յիշատակարանին մէջ (Ձեռ. Վիեննայի Թ. 593. հմտ. Հանդ. Ամս. 1909, էջ 371—373) : Դարանաղցի (368) առանց ժամանակը նշանակելու կը դրէ, թէ Կեսարացին «ժամանակ մի ապստամբ եկաց ի նմանէ (Սրապիոն վարդապետէն) վասն իւր խտապարանոց եւ դոռոզ բարուցն եւ ապա յետոյ հնազանդեցաւ եւ էսոս դաւադան ի նմանէ» : Այսքան ստույգ է որ Կեսարացին 1602ին կը գտնուէր Կ. Պոլսոյ աթոռին վրայ իբրեւ պատրիարք եւ վարդապետ :

³ Օրմանեան կը միտի այն կարծիքին, թէ Մովսէս առաջին անգամ Էջմիածին ծանօթացած ըլլայ Սրապիոնի եւ աշակերտած. Աղբապատում, Բ. 2318—2319 :